Բ. ՏԱՐԻ ՆԻՒ ԵՈՐՔ ՓԵՏՐՎԱՐ 15 1892 ԹԻՒ 4

ՀԱՅԿ

ՀԱՆԳԷՍ ԱԶԳԱՅԻՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ԱՄՍՈՑ 1ԻՆ ԵՒ 15ԻՆ

Տէր և Խմբագիր — Մ. Ս. ԳԱԲՐԻԷԼԵԱՆ Editor — M. S. GABRIEL M. D.

202 W. 23d St., New York.

Տարեկան բաժնեգինն է ամեն երկրաց համար 2 թալէր կամ 10 ֆրանք։

Բաժանորդագրութիւնք կը հաշուին Յունվար 1 էն։

Entered as second-class mail matter. at P.O. New York. NY

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Խմբագրական Սկզբունք.— Ազգ.— Պատմութիւն Ամերիկայի Հայ Գաղթականութեան.— Մահազոյժ Գաբրիէլ Էֆ. Էքնայեանի.— Նամակ Փարիզէն.— Նամակ Երեւանից.— «Հայք». Քաղաքական լուրեր.— Ազգային, Տեղական եւ Զանազան լուրեր։

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔ

Մեր ցեղին ներկայ վճռական և յաւէրժ յիշատակելի ճգնաժամուն մէջ՝ ազգային խմբագրի պաշտօնքն մասնաւորապէս փափուկ և պատասխանատուութիւնն եզակնապէս ահագին է։ Ազգային թերթ մի լոկ հմտութեան գործ չէ, ինչպէս գիտական կամ բանասիրական թերթ մի։

Խմբագիր մի որ իւր համոզումներ կը հաղորդէ ազգին, նորա ապագային հետ կը խաղայ։ Լրագիր մի աւելի հզօր միջոց մ'է հանրային կարծիքն եղանակաւորելու քան թէ գիրք մի։ Մատեանի մէջ հեղինակն իւր հմտութիւն մանաւանդ կը ցուցնէ, իսկ պարբերական կամ մանաւանդ օրական թերթի մի խմբագիրն կ'ազդէ իւր բնաւորութեամբ ինչպէս նաև իւր դաղափարներով։ Թերթն իբրև ամբողջ և կենդանի անձնաւորութիւն մի կը ներկայանայ և կ'ազդէ հասարակութեան։ Խօսելու, դատելու, քննադատելու և վիճելու եղանակօք այնքան բան ըսած կը լինի խմբագիրն իւր բնաւորութեան մասին որքան իւր բանիւք կը ցուցնէ իւր հմտութեան անձուկ կամ ընդարձակ չափերն, զի խօսելով կը յայտնէ թէ ինչ գիտէ և խօսելու կերպովն կը ծանուցանէ թէ ինչ է։

Բարձր բնաւորութեան և խորին մշակութեան տէր խմբագրին թերթն ազգային վառարան մ'է ջերմութեան և լուսոյ, ընդհակառակն չկայ բան մի աւելի աղեռաբեր քան զթերթն որ փոքրոգի և միանգամայն ինքնահաւան թերուսի մի գործն է, այսինքն խաւարի բերա՞ն և մահու չունչն, չունչ որ զերդ խորշակ կը չորցունէ ժողովրդեան սրտին մէջ նորածիլ հայրենասիրութիւնն և ամեն ազնիւ զգացում։

Ազգային թերթի խմբագիրն ոչ միայն հմտութեան և լայնիւ բնաւորութեան տէր պէտք է լինի, այլ և ունենայ կարգ մի հազուագիւտ բարեմասնութիւններ,— ինքնատիրութիւն՝ որպէս զի անգրգռելի մնայ ի սին պայքար, և փափկահպութիւն (tact) որպէս զի կարենայ անձերու և խնդիրներու հետ վարուիլ ըստ արժանւոյն։

Որքան և փափկահպութիւն ունենայ ազգային խմբագիր մի, չէ հնար որ ամեն կուսակցութեան համաձայն, ամեն պաշտօնակցի համակիր և ամեն թղթակցի հաճելի լինի։ Ի հարկէ պիտի մերժէ սնամէջ պարունակութիւն ունեցող յօդուածներ, ինչպէս նաև կուսակցական մոլեռանդութեամբ արատաւոր թղթակցութիւններ, չափազանց երկայններն պիտի համառօտէ, անխոհական յայտնութիւններն և վիրաւորիչ բացատրութիւններն պիտի յապաւէ, և երբեմն ալ զանց առնուած տիրողներն պիտի դնէ և հեգնօրէն թիւր հեգեալ անուններն պիտի ուղղագրէ։ Այս և այսպիսի պատճառներով է որ խմբագիրն անհաճոյ կը լինի սմանց։

Թերթին դիրքն փափուկ է մանաւանդ այն կուսակցութեանց հանդէպ որք առաւել կամ նուազ անհամաձայն են իրեն։ Կրնայ խմբագիր մի քննադատել կուսակցութիւն մի, բայց ոչ նախատել։ Եւ եթէ քննադատեալ կուսակցութեան կողմանէ պատասխան ընդունի պարտի հրատարակել զայն եթէ չատ անիմաստ կամ անճահ պարունակութիւն չունի։ Եթէ կուսակցութիւն մի արժանի համարուած է քննադատուելու, պէտք է նաև արժանի համարուի ուղղութեան երբ ինքզինք կը պաշտպանէ։ Մեք այս սկզբան համաձայն հրատարակած ենք մեզ ուղղեալ պատասխաններ, և ողորմելի կը թուի մեզ այն խմբագիր որ հակառակորդ կուսակցութեան մի օրինաւոր պատասխանն հրատարակել՝ ըստ ուարման և անհաստատութեան նշան կը համարի։

Մերժած ենք, ընդհակառակն, հրատարակել այն բոլոր նամակներ — բաղմաթիւ — որովք սմանք կը բաղձային ջախջախել այնպիսի երկու թերթեր, որք թերթ կոչուելու արժանիքէն զլխովին զուրկ են, և որոց դէմ մեք խօսիլ անարժան համարած էինք։ Մեք անխոնջելի պահեցինք մեր վեհանձն լռութիւն այդ թերթերու հանդէպ, որոց մին յաճախ և միւսն անդադար ջանայ կռուի բռնուիլ մեր հետ։

Զկաց՞ սակայն պարագայ յորում թերթ մի կռուի ուրիշ թերթի հետ։ Ըստ մեզ ինչպէս ողորմելի է կրաւասիրական բնազդման դերի եղած խմբագիր մի որ իրեն պատիւ և հաճոյք կը համարի վէճ յուզել և զբաղուիլ ամեն թերթի հետ, նոյնքան ողորմելի է նաև այն խմբագիր որ ծայրայեղ երկչոտութեամբ կը հրաժարի յամենայն ընդհարումներէ, վասն ի կայ ընդհարում յորմէ քաշուիլն վատութիւն է, ազգին շահերն մատնել է, խմբագրական պարտուց դէմ մեղանչել է։

Ո՞րպիսի պարագայք և խնդիրք կրնան ընդհարումն արդարացուցանել, դայդ որոշել կը մնայ խմբագրին ողջմտութեան և պարտազգացութեան։

Բայց արդար ընդհարումն ալ իւր չափն ու նպատակն ունի։ Պէտք է գիտնալ դադարել ի պատեհ ժամուն։ Օրինակի համար երբ կը տեսնէ թէ ոսոխն փաստից անխուսափելի գօրութենէն խուսափելու համար անձնական խծբծանաց տղմի մէջ կ'ընկղմի, իսկոյն պէտք է վերջ տալ պայքարին։ Յաղթասէր և եսական ոգւով եղած ընդհարումներէ ո՛չ լոյս այլ տիղմ կը ցայտէ։

Որպէս զի վիճաբանութիւնն լուսաւորէ հանրային կարծիքն, հարկ է որ խոհուն մտքեր անկեղծութեամբ և յարգանօք ընդհարին։

ԷՕԴ

Վերջին անգամ մ'ալ կը խնդրեմք որ մեր բաժանորդներէն անոնք որ դեռ չեն վճարած, բարեհաճին անյապաղ մի հասցունել իրենց բաժնեգին։

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅ ԳԱՂԹԱԿԱՆՈՒԹԵԱՆ

Ծան.— Այս համառօտ պատմութիւնն խմբագրելու համար բաւական ճանճրացուցինք մեր գաղթականութեան երիցագոյն անդամներն, որոց հրապարակաւ կը յայտնեմք մեր շնորհակալիք։

Ուր որ թուականներուն կատարեալ ճշդութեան վստահ չէինք, հարցական նշան դրինք։ Այս անճշդութիւնք եթէ կան, մէկ կամ երկու տարուոյ սահմանէն չեն անցնիր։

Շատ տարի չէ դեռ երբ գաւառացի Հայն Վարի Աշխարհք անունով կը կոչէր Ամերիկան, և անոր գոյութեան կը հաւատար բաւական թերահաւատութեամբ։ Հայաստանեայն տեսակ մի հէքեաթ կամ վէպ կը համարէր Վարի Աշխարհի պատմութիւնն, և այդ աշխարհն տեսնել իրեն համար աւելի անյուսալի բան էր քան հրաշք մի տեսնել։

Հայուն թերահաւատութիւնն փարատեցաւ ի տես այն գլխարկաւորներուն որք հետ զհետէ եկին Ամերիկայէն յԱրևելս իբրև միսիոնար և նմա հետ սերտ յարաբերութիւն հաստատեցին։ Միսիոնարներն Հայոց մէջ աշխատելու համար չեկան նախ, բայց շուտով ծանօթացան նոցա հետ։ Երուսաղէմի մէջ առաջին անդամ միսիոնարաց ուշադրութիւնն դարձաւ մեր ցեղին։ Հայ ուխտաւորներ տեսնելով անդ, 1822ին, հարցին «Ո՞վ են այս բարետեսիլ, սեւահեր և թխակն մարդիկ, այսպիսի խոհուն և իմացական երեսօք։»

Հայ են դոքա։

Այսպէս եղաւ առաջին ծանօթութիւնն Ամերիկացւոց ընդ Հայս։

1831ին միսիոնար Կուտէլ հասաւ ի Կ. Պոլիս։ Քիչ ժամանակէն եկան ուրիշներ ևս, և Հայոց մէջ գործել սկսան։

Այս եղաւ առիթ որ Հայերն Ամերիկայի վերայ լսեցին և ի սիրա հայ պատանւոյ մ'ինկաւ երթալ յԱմերիկա։

1834ին առաջին անդամ լինելով Հայու տղան ոտք դրաւ Միացեալ Նահանգաց հողին վերայ։ 16 տարեկան պատանի մ'էր նա, Խաչատուր Օսկանեան, որ միսիոնարաց թելադրութեամբ եկաւ Նիւ Եորք իբրև ուսանող։ Վեց տարի այս երկրի մէջ մնալէ յետոյ վերադարձաւ ի Կ. Պոլիս և 1841ին հիմնեց անդ հայերէն լրաթերթ մի Ազդարար Բիւզանդեան անունով։ 1854ին եկաւ դարձեալ ի Ն. Եորք, ուր այլ և այլ առեւտրական ձեռնարկներ ըրաւ, և վերջապէս լրագրական ասպարէզն իջաւ, ուր ցայսօր իւր գործունէութիւն կը շարունակէ երբեմնակի ըստ ներելոյ ծերութեանն։

Երկրորդ Հայն որ եկած է յԱմերիկայ, է ոմն Թադէոսեան, 1841ին, Պոլսոյ միսիոնար Տուայթի սպասաւորն։ Սա Բահաթի Լոգում չինելու արհեստն յատկապէս սովրելով Օսմանեան մայրաքաղաքին մէջ, կուգայ Նիւ Եորք և բաւական տարիներ շաքարագործութեամբ կը զբաղի։ 30—40 հազար թալէռի չափ դրամագլխոյ տէր կրցած է լինիլ այս մարդ, բայց վերջապէս իւր յախուռն գնացիւք ինքզինք կործանած է, և երկրորդ կընոջն հետ չարաչար վարուելով նեղութեանց մէջ ինկած և մեռած է։ Առաջին կնոջմէն, որ Ամերիկուհի մ'էր, ունեցած է մի ուստր և մի դուստր որք դեռ կ'ապրին Պրուքլինում, բոլորովին անճանաչ Հայ Գաղթականութեան։

1841(՞) Տէր—Սահակեան Յովհաննէս կուգայ յԱմերիկայ, և կ'ուսանի աստուածաբանութիւն։

Նոյն թուականին մօտերն է որ Վեհապետեան ևս, այժմ Պասրիարք Երուսաղեմայ, կուգայ յԱմերիկա։

1845(՞) Եանքիներու աշխարհն կը նետուի և Բրինթընի մէջ բժշկութիւն կ'ուսանի Տր. Սենեքերիմ։ Սա է անդրանիկ հայ բժիշկն Ամերիկայի։

Քրիստափոր Սերոբեան ժամանակակիցն էր Սենեքերիմի։ Նիւ Հէյվընի Եէյլ Համալսարանում ուսաւ գիտութիւն, և առաջին հայ ընթացաւարտն է այդ Հաստատութեան ուր յետոյ ուրիշ ոչ սակաւ Հայեր աշակերտեցան։ Քրիստափոր Սերոբեան տարբաբան արուեստագէտն եղաւ ամերիկեան դեղին Պանքնոթին, որ յետոյ կատարագործուելով այժմու կանաչ գոյնն առած է։ Հայ Գիտնականն շատ սիրելի եղած էր համալսարանի ուսուցչապետաց, որք զինքն ուսուցչական մարմնոյն մէջ մուծանել կը խորհէին, և յոյժ ի պատուի էր նաև կառավարական շրջանաց մէջ։

Սարգիս Մ. Մինասեանի գալուստն տեղի ունեցած է 1848ին։ Վաճառականութեամբ զբաղելու ծրագրով եկած է նա, և երկար տարիներ ամերիկեան ապրանքներ ներածեր է ի Կ. Պոլիս։ Ինքն գործէ քաշուած ընչեղ ծերունի մ'է, Ամերիկուհւոյ հետ ամուսնացած և ընտանեաց հայր եղած, կ'ապրի ի Պրուքլին։ Մինասեան ժամանակաւ շատ Հայերու օգնած է դրամով և խրատներով, և այժմ ալ Ամերիկայի Հայոց մէջ քան զամենայն հարուստն կը համարուի։

1848ին եկած է նաև Խաչատուրեան, որ ապա դառնալով ի Կ. Պոլիս ատամնարուժութիւն ըրած է,

1849 թուականին Պոլսոյ Խաղիւղէն Յարութիւն Մանուէլեան եկաւ, Պոստնի մէջ կ'ուսանէր կահագործութիւն (cabinet making), բայց հիւանդանալով վերադարձաւ ի Պոլիս և անդ մեռաւ։

Նոյնպէս 1849ին եկած է Զմիւռնիացի Սարգիս Փափազեան, որ Թրոյի մէջ երկրաչափութիւն կ'ուսանէր, բայց ձգելով այդ արուեստի ուսումն սկսաւ վաճառականութեան Ամերիկայի և Տաճկաստանի ապրանաց։ Ի սկզբան փայլեցաւ, բայց յետոյ անյաջող եղաւ։ Ժամանակ մ'ալ Զմիւռնիոյ և Զուիցերիոյ միջեւ վաճառականութեան գործ ըրաւ իւր եղբօր հետ ընկերացած։

1850ին եկած է Գրիգոր Յարութիւնեան, որ ատաղձագործութեան արհեստն սովրելով վերադարձած է ի Կ. Պոլիս, բայց չէ կարացած գործն սկսիլ հոն։

Նոյն թուականին եկած է նաև Նոր Գիւղցի Յակոբն, որ ձուլելու արհեստին հետամուտ եղած է։ Սա ևս յետոյ Պոլսոյ մէջ յաջողութիւն չէ գտած։

1850ին է որ եկած է նաև Յակոբ Մաթէոսեան, կազմարար, որ Պոլսոյ մէջ երկար տարիներ բողոքականաց ազգապետի պաշտօն վարած է յետոյ։

1852ին եկաւ Սիմոն Արդրանիկեան. սա մեռաւ ի Պոսթըն։

Նոյն թուականին եկաւ Յարութիւն Խաչատուրեան, եղբայր Տր. Սարգիս Խաչատուրեանի. քիչ ժամանակ աստ մնալով վերադարձաւ։

1853ին եկաւ Մինաս Կարապետեան, որ յոյժ ճարտար հանդիսացաւ իբրև մեքենագործ և կահագործ։

Պոլիս վերադառնալով փեսայացաւ Պալեաններուն, և եղաւ կայսերական պալատներուն կահագործաց պետ։ Քիչ ժամանակէն ամուսինն վախճանելով ինքն ալ գործէն ելաւ և գնաց յԵգիպտոս։ Ստոյգ տեղեկութիւնք կը պակսին, թէև զրոյց ելած էր թէ անդ ևս յայլող դիրք մի ունեցած է։

1854ին եկաւ նորա եղբայրն ալ, Խաչատուր Կարապետեան, ուսաւ մեքենագործութիւն։ Ամուսնանալով ասա, ծառայեց Ամերիկայի քաղաքային պատերազմին մէջ և վերջապէս վախճանեցաւ ի Ֆիլատէլֆիա։

Իբր նոյն թուականին եկան Նիկոմիդիացի երկու եղբարք Տոպրաշեան, Սփրինկֆիլտում ուսան մեքենագործութիւն. Մին ամուսնացաւ ասա, և անյայլող կենցաղ վարելով մեռաւ։ Միւս եղբայրն յետոյ սովրեցաւ երկրագործութիւն և այժմ Նիկոմիդիոյ կողմերն կը դանուի, որքան որ գիտեմք։

1855(՞)ին եկած է Ախլցխացի Աւետիս, ուսած է գրաշարութիւն։ Հոս ամուսնացած և հոս մեռած է։

1856ին եկած Լինիլ կը կարծուի նաև Աղաբեկեան ոմն, ատամնաբոյժ, որ Քինկ անուն միսիոնարի ուրուն դասեր հետ ամուսնացած է յետոյ։

1856(՞)ին եկած են Նիկոմիդիայէն և Տիգրանակերտէն երկու Հայեր, որք Ռոչէսթրում ուսանելով աղօրեպանութիւն, այժմիկ իրենց գործ յաջողութեամբ կը վարեն ի Կ. Պոլիս։

1857ին եկած է Յակոբ Պոյաճեան, ուսած է տպագրութեան արհեստն և երկար տարիներէ ի վեր Պոլսոյ մէջ առաջնակարգ տպարանապետ մ'է։ Մի քանի տարիէ ի վեր բողոքականաց Աղգապետի պաշտօնն ալ կը վարէ միանդամայն։

Նոյն թուականին եկած են Ալէքսան Աստուրեան, որ ուսաւ ձուլելու արհեստն, և Պետրոս Յարութիւնեան որ սովրեցաւ ջերմոյ շինել։ Երկուքն ալ ետ գնացած են ի Պոլիս, և վախճանած։

1857-ին եկած է Սիմոն Մինասեան, 1859 կամ 60 ին՝ Կարապետ Գալուստեան և Խաչատուր Անտոնեան, 1862-ին Պարոնիկ Մատթէոսեան։ Ասոնց չորսն ալ ուսած են բժշկութիւն։

Տր. Սիմոն Մինասեան իբրև բժիշկ կարևոր պաշտօն վարած է այս երկրի մէջ, և պատերազմին ատեն Ֆիլատէլֆիոյ Հիւանդանոցին բժշկապետն էր։ Տր. Պարոնիկ Մատթէոսեան, որ այժմ Պոլսոյ մէջ առաջին հայ վիրաբոյժ կը ճանչցուի, իբրև բժիշկ ծառայած է Ամերիկայի քաղաքային պատերազմին ատեն։ Տր. Կարապետ Գալուստեան ևս նոյն ատեն յաջողութեամբ ծառայած է բանակին մէջ։ Այս երեք հայ բժիշկներէ զատ բանակին ծառայող Հայ մ'ալ կար, Խոսգիւղցի Արմենակն, որ իբրև զինուոր փայլեցաւ և orderlyի աստիճանին բարձրացաւ— այն է հրամանատարին հրամաններն ստորակարգեալ սպայից ճիարշաւ հասցուներլու պաշտօնին—։ Զմիւռնիացի Նարինեան ևս նախ հիւանդանոցին մէջ, Տր. Մինասեանի ձեռքին տակ ծառայելէ յետոյ՝ դնաց բանակին մէջ ալ ծառայել իբրև զինուոր։ Յիշենք նաև զՁօրա Թէոտորեան, որ նոյն հիւանդանոցին մէջ Նարինեանի պաշտօնակիցն լինելէ յետոյ ուսաւ բաշկութիւն։ Պատերազմին ատեն կար նաև Թուրք մի, Գատրի Պէյանուն, օսմանեան սպայ, որ ամերիկեան բանակն մտած էր բարձր պաշտօնի հասնելու յուսով, բայց որովհետև անգղիերէն չգիտէր, ստիպեցին զինքն իբրև հասարակ զինուոր ծառայելու, ընդ որ չհաճելով պէյն դասելիք եղաւ և հազիւ պրծաւ արժանաւոր պատիժէն։ Թուխանելեան ևս պատերազմի սկիզբներն եկած է յԱմերիկա, բայց զինուոր լինելու ինքնեկ առթէն կամ վտանգէն բաւական նեղութեամբ խուսափած է։

1862-ին կամ քիչ յետոյ եկած է Ասլան Սահակեան, Տիգրանակերտցի, որ ցարդ Նիւ-Եորքէն ոչ շատ հեռի ի Եոնքերս կը բնակի։ Վաճառական և կալուածատէր է Սահակեան, և թերևս Մինասեանէն յետոյ քան զամենայն հարուստ Հայն է Ամերիկայում։ Սա ամուսնացած չէ դեռ։

1862-ին եկած է նաև Յակոբ Իսկեան, վաճառական, որ այժմ կը բնակի ի Ճէրսի Սիթի Հայց։ 1867-ին եկան Յարութիւն, Վարդավար և Յովհաննէս եղբայրք սորին։ Սոցա մէկ եղբայրն Գրիգոր Իսկեան Նիւ-Եորքի Համալսարանին մէջ բժշկութիւն ուսաւ փայլուն յաջողութեամբ, և Պոլսոյ թուրք թըպպիյէին մէջ երկու տարի ուսուցիչ եղաւ։ Դժբաղդաբար երբ ընտանեօք Ամերիկա կը վերադառնայր, նաւաբեկութեամբ ծովամոյն կորեաւ։ Ուրիշ եղբայր մ'ալ, Կարապետ Իսկեան, Տաճկաստան վերադարձաւ և հոն մեռաւ։ Մէկ ուրիշ եղբայր մ'ալ իբր երկու ամիս առաջ մեկնեցաւ այս երկրէն, ժամանակ մի ասա ուսանելէն յետոյ։ Այս ամեն կորուստներէ և բացակայութիւններէ յետոյ, այժմիկ Ամերիկայի մէջ Իսկեան հինգ հարազատ եղբայրներ կան, Յարութիւն Յակոբ, Վարդավար, Լուտեր և Հայկազուն, ամենքն ալ վաճառական։

1867-ին եկած է նաև Պօղոս Յակոբեան, որ ելեքտրատիպ պատկերագործութեան մէջ համբաւ ստացած և այժմ անկախ գործի սկսած է նոյն արհեստի մէջ։

Այս թուականի մօտ եկողներու թիւն արագօրէն աճիլ կը սկսի։ 1870-ին այլ ևս կարելի չէ մատի կամ համրիչի վերայ թուել Հայերն։ 1867-ին դեռ հարիւր Հայ հազիւ կար, բայց 1870-ին թիւն կը սկսի անորոշ լինիլ այլ և այլ քաղաքներ և զանազան գործերու մէջ կը ցրուին։ Ալ հարիւրաւոր են Հայերն։ Եւ ուստի ի դէպ է ասել, կարծեմք. թէ 1870-էն ի վեր ոչ թէ Հայեր կը գտնուին, այլ Հայ գաղթականութիւն մի կայ Միացեալ Նահանգաց մէջ։

Շարունակելի

ՀԱՅՐ

— Կը խնդրեմք որ ուշադրութիւն ընծայուի բաժանորդագրութեան պայմանաց որպէս նշանակուած են թերթիս ճակատն։ Յունվար 1-էն կը հաշուենք բաժանորդագրութիւններն ո՛ր ամսոյ մէջ ալ որ բաժանորդագրուի ոք, և (Ա.) թիւէն կը յղեմք բոլոր թիւերն եթէ սպառած չլինին։

— «ՀԱՅՐ»ի տարեկան բաժնեգինն ամեն երկրի համար երկու թալէռ (չորս ռուպլի կամ 10 ֆրանք) է։

— Մեր բժշկական զբաղմանց բերմամբ անհնար եղած է մեզ բաժանորդագրութեանց համար բաւական թղթակցել այլ և այլ գաղթականութեանց հետ, ուստի և շատ երախտապարտ եմք այն ազնիւ ազգայնոց որք երկրագնդիս հինգ մասերուն մէջ այլ և այլ գաղթականութեանց մօտ «ՀԱՅՐ»ի խնամակալ լինիլ յանձն առած են անձնուիրաբար և մեր թերթ տարածել կ'աշխատին։

— Բաղձալի է որ բաժանորդք ամբողջ տարեկան բաժնեգինն մէկէն վճարեն։ Մանտա փոսթի կամ մընի օրտրրով մեզ բաժնեգին յղելու ձանձրութենէն ազատ են, զի այժմ յանձին Տ. Աւետիս Նահիկեանի ՀԱՅՐ նոր խնամակալ մ'ալ ունեցաւ, որու ևս կրնան յանձնուիլ բաժնեգինք։

ՄԱՀԱԳՈՅԺ

ՏԻՐ ԳԱԲՐԻԷԼ ԷՔՆԱՅԵԱՆԻ

ՊԱՏՃԷՆ ԳՈՒԺԿԱՆ ՆԱՄԱԿԻՆ

Տիկին այրի Տ. Էքնայեան, Տիար Կ. Էքնայեան, Օքիորդ Փ. Էքնայեան, Տիար և Տիկին Ա. Էքնայեան, Տիար Արամ Էքնայեան, Օրիորդ Արսինէ Էքնայեան, Օրիորդ Արաքս Էքնայեան, Տիար Կ. Բէհլիվանեան, Տիար Ս. Սըվաճեան եւ բոլոր Ընտանիքն.

Պատիւ ունին ծանուցանել ձեզ զսգալի կորուստն զոր ունեցան յանձին

ՏԻՐ ԳԱԲՐԻԷԼ ԷՔՆԱՅԵԱՆԻ

Իւրեանց Որդւոյն, Եղբօր և Հօրեղբօր, վախճանելոյ ի-18 Յունվարի 1892, ի տան իւրում, ի Բարիզ, 17 Շաթօտէօն փողոց, ի հասակի 42 ամաց։



ԳԱԲՐԻԷԼ ԷՔՆԱՅԵԱՆ

«ՀԱՅՐ»ի Խմբագրութիւնն խորին ցաւով լսեց Տիար Գ. Էքնայեանի մահուան գոյժն, իբրև ազնիւ հայրենակցի որ պատրաստ էր անխոնջ հայրենասիրութեամբ աջակցիլ եւ քաջալեր հանդիսանալ անկեղծ ազգային գործիչներու։ «ՀԱՅՐ»ի ընթերցողք գիտեն թէ նա ատենապետն էր Փարիզի Հայ Հայրենասիրաց Ընկերակցութեան և ջերմ ջատագով կեդրոնականացման գաղափարին։ Ազգային դատն շատ զգալի կորուստ մ'ըրաւ յանձին Գ. Էքնայեանի։

Մեր սրտագին վշտակցութեան արտայայտութիւնն կը խնդրեմք ընդունին այն ազնիւ անձնաւորութիւնք որք անուանեալ են վերի գուժկան նամակի մէջ։

ՆԱՄԱԿ ՓԱՐԻԶԷՆ

Փարիզ 22 Յունվ. 1892

Խմբագիր Տնօրէն ՀԱՅՐ ազգօգուտ թերթի
Ի Նիւ Եորք

Ձեր վարած սուրբ դատի անձնուէր գործիչներէ մին, հանրածանօթ հայրենասէրն Տիար Գ. Էքնայեան յետ մի կարճատև հիւանդութեան էնֆլիւանցայի զոհ գընաց ամսուս 18-ին։

Յուղարկաւորութեան տխուր հանդէսն տեղի ունեցաւ յաջորդ օրն, մեծ շքով, Փարիզու Հայ Գաղթականութիւնն ամբողջովին փութացած էր ներկայ գտնուիլ, օտարազգեաց հոծ բազմութիւն մը կար, յորս մարդասիրական մի քանի ընկերութեանց ներկայացուցիչներն, նշանաւոր դրամատանց պատգամաւորներն, Փարիզու ազամանդի վաճառականաց մեծամասնութիւնն և մի քանի խմբագրեր, ընդ ամենն աւելի քան 600 անձինք, այր և կին. որոց մեծամասնութիւնն արտասուաթոր աչօք, հետի և գլխիբաց հետևեցան մեր մեծանուն հայրենասերի դագաղին մինչ ցդերեզման (Բէռլաշէզ)։ Դագաղն ծածկուած էր պսակներու կոյտին տակ, որոյ գրեթէ ամենն սպիտակ գամիլիայէ հիւսուած էին։ Թաղման արարողութիւնն խիստ սրտաշարժ էր, գրէթէ յուղարկաւորութիւնն ամբողջովին կ'արտասուէր, հանգուցելոյն եղբայրն և քեռորդիքն այնպէս յուսահատեալ կը կոծէին, որոց ընկերացողներն հազիւ կարէին զայնս սահց վերայ կեցնել։ Տիար Գալֆագճեան մի սրտաշարժ դամբանական խօսեցաւ, մի քանիներ ևս հանդերձեալ էին դամբանականներ խօսիլ՝ սակայն խոհուն հանդիսականաց սմանք ի նկատի առնլով արարողութեան՝ հանգուցելոյն եղբօր և քեռորդւոց վերայ ներգործած մեծ և տիւր տպաւորութիւնն՝ արժան համարեցին վերջ տալ հանդիսին անմիջապէս։

Ուսանողաց մի մասն սև ազդագրեր ուշ ընդունելնուն՝ չէին կրցած իրենց պարտքն կատարել, յաջորդ օրն խմբովին գացին, մի պսակ դնել մեծ հայրենասիրի գերեզմանի վրայ և յորոց մին խօսեցաւ մի սրտաշարժ դամբանական։

Տիար Էգնայեան ծնած է ի Կ. Պոլիս 1849ին։ Օրթագիւղի հայկական երկրորդական վարժարանի շրջանն աւարտելէ վերջ, աշակերտած է Կ. Պոլսոյ պատերազմական ուսումնարանին, ուր փայլուն աշակերտ մը եղած է շնորհիւ իւր հանճարի։ Ի հասակի 25 ամաց կը աւարտէ պատերազմական վարժարանի շրջանն գոլ աղասրի աստիճանաւ, որ Ֆրանսական sous lieutenant colonel աստիճանին կը համապատասխանէ։ Սակայն Տիար Էգնայեան որ թուրք սպայութեան համազգեստին տակ Հայ սիրտ մը կը կրէր, չուզելով տաճկական դրօշին ծառայել, հեռացած է Թուրքիայէն։ Մի քանի տարիներ վերջ հաստատած է ի Փարիզ ազամանդի վաճառականութեան մի տուն՝ որ շնորհիւ իւր ճարտար գործունէութեան մի քանի տարուան մէջ մեծ կարևորութիւն ստացած է։ Տիար Էգնայեան ի Փարիզ հաստատուելէն ի վեր իւր ազգասիրական և մարդասիրական զգացումներն զայն սիրելի ըրած են Փարիզու Հայ Գաղթականութեան, որոյ ազգային գործունէութեան գլուխն գըտնուած է միշտ։ 1880ին Հայաստանի մեծ սովին առթիւ ի Փարիզ կազմեալ սովելոց յանձնաժողովոյն գործօն անդամն եղած է։ Պահպանիչն էր Փարիզու Հայկազեան Ուսումնասիրաց ընկերութեան։ Անդամ էր շատ մը մարդասիրական ընկերութեանց։ Հիմնադիրն և ոգին եղած է Փարիզու Հայ Հայրենասիրաց Միութեան։ 1884ին յղացած է Եւրոպական զանազան քաղաքաց մէջ հաստատեալ Հայ Հայրենասիրաց Միութեանց գործունէութեանց կեդրոնացման հարկն. և նոյն տարւոյն այս նպատակաւ ի Փարիզ գումարեալ պատուիրակաց ժողովոյն անդամ եղած է, իբր պատուիրակ Փարիզու Հայ Հայրենասիրաց Միութեան։ Նպաստած է Հայկական հարցի բերան թերթերու. մեծանուն հանգուցեալն շուրջ 10 տարիներէ ի վեր ազգային ամեն կարգի շարժմանց մէջ բաժին ունեցած է իբր գործիչ և նա մանաւանդ խրախուսիչ գործիներու։ Հայկական խնդիրն իւր մտածութեանց գլխաւոր առարկան էր և առ այս երբէք գործելէ և նա մանաւանդ գոհելէ չէ դադրած։ Այս վերջին հիւանդութեան ժամանակամիջոցին՝ շարունակ Մուրբ Խնդրոյն մասին խօսած է և իւր տկարանալն զգալով բազմիցս կրկնած է, կամիմ ապրիլ ոչ թէ ինձ՝ այլ Հայկական Խնդրոյ լուծման նպաստելու համար, և պատուիրած է քանիցս զինքն շրջապատողաց շարունակել իւր գործն։ Վերջապէս իւր մահուան ճգնաժամին բանդագուշանաց մէջ շարունակ խօսած է Հայու փրկութեան և Հայաստանի վերականգման նկատմամբ, և ա՛ռ Հայաստան բացագանչութիւնն եղած է իւր վերջին հառկանալի բառերն։

Տիար Էգնայեան լռելեայն գործող հայրենասիրաց դասին կը վերաբերէր, իւր մտերիմք և մեծ գործիչք միայն ծանօթ էին իւր գործունէութեան — Հայոցս Հայրիկն զայն հայրենասիրաց տիպար կ'անուանէր։ Կ'արհամարհէր փառասիրութիւնն և կը ծիծաղէր միշտ առ ի փառս մարդկանց գործող հայրենասիրաց վրայ, սակայն երբէք չէր վշտացնէր զայնս և միշտ կը կրկնէր, «աշխատելու եմք փառասէրներէ ալ օգտուելու։» Հարստութիւնն չափաւոր էր և անհամեմատ իւր գործունէութեան։ Նա հարուստ էր սրտով քան գանձով։ Զայն մօտէն ճանչցողներն քաջ գիտեն թէ քանի հաղուագիւտ յատկութիւններով օժտեալ էր, միշտ համեստ և խոհեմ, հեզահամբոյր և քաղցրաբարոյ, ազգասէր և մարդասէր, անձնուէր բարեկամաց և միշտ պատրաստ ծառայութիւն մատուցանելու, բաւ էր տեսակցիլ մի անգամ նորա հետ, հիանալու և քաղցր յիշատակ մը պահելու համար իւր մասին։

Մեծ է Հայուն կորուստն յանձին այս մեծ մարդուն. Հայն նովաւ կը կորուսանէ իրեն պատուաբեր ազգայիններէն մին և իւր Սուրբ հարցի պաշտպանութեան քրտնաջան մեծ գործիչներու կարեւորագոյնէն, Փարիզեան Հայ գաղթականութիւնն իւր ազգային գործունէութեանց և շարժմանց ղեկն և առաջնորդէն, ուսանողութիւնն իրեն պաշտպան և օժանդակ մի Հայէ, և մարդկութիւնն՝ մարդասիրական վեհ զգացմամբ վառ կարօտելոց նպաստող, անկելոց պաշտպան իւր մի ամենագնիւ անհատէն։

Հայրենիք պարտք մ'ունէր, պարտք մի կը զգար զայն իւր ծոցն ընդունիլ, նորա ամիւնն իւր նախահարց ամիւնին խառնել և նովաւ մխիթարուիլ. սակայն անէծք բաղդին... որ յօտար երկրի կնքել տրամադրեց նարա կեանքն և օտարի հողն պատիւ պիտի ունենայ ընդունիլ զայն։ Ո՛վ Ֆրանսա, գիտցիր որ վաղեմին Հայաստան կը նախանձի ընդ քեզ՝ որ իւր վեհ զաւակներէ մին ևս կ'ընդունիս քո ծոցն, հեռի այն երկրէն որ նա այնչափ սիրեց, և որոյ վասն նա այնչափ քրտնեցաւ։ Քո ծոցն ունիս արդէն Հայկական Սուրբ հարցի հեղինակներէ մին անմահն Ներսէսի Մեծ Մարդն և այսօր կ'ընդունիս նորա շուղին հետևող՝ թշուառ հայու պաշտպաններէն մին, զոր օտարք մեծ հայրենասէր կ'անուանեն։

ՍԳԱՒՈՐ ՄԸ

ՆԱՄԱԿ ԵՐԵՒԱՆԻՑ

Տփղիսի «ՄՇԱԿ»ին մէջ հրատարակեալ հետեւեալ նամակին վերայ կը հրաւիրեմք մեր Ամերիկայի հայրենակցայ ուշադրութիւնն։—

«Վաղարշապատից 4—5 վերստ հեռաւորութեան վրա գտնվում է Սամաղար անունով հայաբնակ գիւղը, որի բնակիչների մեծ մասը հայ-լուսաւորչականներ են, իսկ մի փոքր մասը պատկանում է բողոքական եկեղեցուն։ Այս գիւղը մի քանի տարի առաջ ներկայացնում էր մի խիստ տխուր պատկեր մտաւորապէս. բայց անցեալ 1890 թուականից բացվում է առաջին գիւղական միդասեան դպրոցը, որը մինչև այժմ էլ շարունակում է իր գոյութիւնը։

Ուսումնարանի շէնքն նոր է կառուցված և սկզբում յատկացրած է լինում հայ-աւետարանականների հոգեւոր պաշտամունքներին, բայց այժմ ծառայում է թէ իբրև աղօթատուն և թէ դպրոց, որի մէջ սովորում են յիսուն աշակերտներ թէ լուսաւորչական և թէ աւետարանական դաւանութեան։

Մեր ներկայութեամբ ուսուցչի հարցմունքներին աշակերտները ժրութեամբ էին պատասխանում. նայելով սանիկների ուրախ եւ զուարթ կերպարանքին, կարելի էր հասկանալ, որ դպրոցը ղեկավարվում է նորագոյն մանկավարժական մեթոդների արժէքը հասկացող ղեկավարներով։ Աշակերտների մէջ կան զանազան տեղերից եկածներ, մինչև անգամ Ալէքսանդրօպոլից... Տեսնելով այդ երևոյթը, ամեն մի ճշմարիտ հայի սիրտը լցվում է ուրախութեամբ։ Դեռ մի քանի տարի առաջ բողոքական հայն իր ազգակից լուսաւորչական հայից հալածվում, նախատվում, հայհոյվում էր և համարվում էր ազգուրաց, բայց որքան ուրախալի է տեսնել այժմ, որ այդ նոյն լուսաւորչական հայն իր որդուն ուղարկում է աւետարանական հայի դպրոցը. մի քանի տարի առաջ դաւանական զանազանութիւնը կատաղի թշնամութեան պատճառ էր դարձել երկու արիւնակից եղբայրների մէջ. բայց այսօր հայը փոքր ի շատէ ըմբռնել է իր եղբօր կամ ընկերոջ հետ համերաշխարար ապրելու անհրաժեշտութիւնը, այսօր նա մօտեցել է այն ճշմարտութեանը, թէ բողոքական հայն էլ իրաւամբ նոյնքան հայ է, որքան լուսաւորչականը և ուստի դաւանութիւնը պէտք չէ իրանց երկպառակէ։ Ո՛րքան երջանիկ կը լինեինք մենք այսօր. եթէ հէնց սկզբից համոզված լինէինք այս ճշմարտութեանը։ Մենք. բնաւ մեղադրելի չենք գտնում մեր ազգէտ ժողովրդի այդ տեսակ վարմունքը, մեղադրելին ժողովրդի կոյր առաջնորդներն են։ Զարմանալի չէ՞ արդեօք, որ նոյն իսկ մեր ժամանակներում գտնվում են այնպիսի խաւարամիտ մարդիկ, որոնք իրանց համարում են ազգասէրներ (??) և շատ անգամ իրանց խաւար դըրչով երևան են գալիս մամուլի մէջ ու սկսում են որոմ ցանել ազգի մէջ. այդպիսիները իրանց խաւարային, հին ու փտած դաղափարներով պղծում են մամուլի սուրբ կոչումը և լրագրական ասպարէզը դարձնում են իրանց զազիր շահամոլութեան մի միջոց։ Վա՛յ ձեզ կեղծաւոր դպիրներ ու կոյր առաջնորդներ։

Դասամիջոցին, երբ դպրոցի ուսուցչի հետ կանգնած խօսում էինք, գուլպա գործելով մեզ մօտեցաւ մի գիւղացի կին և գրպանից հանելով մի փոքրիկ կապոց՝ սկսեց բանալ միջից հանեց 2 ռուբլի թղթադրամ. դա իր որդու տարեկան ուսումնավարձի մի մասն էր. կնոջ հագուստը ցոյց էր տալիս, որ նա աղքատ էր, բայց նա այնքան զուարթադէմ և սիրայօժար կերպով մատուցեց այդ ուսուցչին, որ մեզ վրա խիստ ուրախալի տպաւորութիւն գործեց։ Դա մի պերճախօս փաստ է, որ մեր ժողովուրդը սիրում է ուսումը այնչափ, որ գիտէ իր ունեցածը (անգամ ապրուստի վերջին կօպէկը) զոհաբերել իր զաւակների ուսումնառութեան համար։

Սամաղարի բնակիչները պարապում են գլխաւորապէս բամբակի մշակութեամբ. բայց, ի հարկէ, նահապետական ձևով է լինում թէ ցանելը, թէ քաղելը, թէ մաքրելը և թէ թել մանելը. եթէ սամաղարցիք փոքր ի շատէ հարուստ լինէին և ունենային եւրոպական սիստեմով նորագոյն մեքենաներ, կարճ միջոցում բաւական մեծաքանակ բամբակ կը ըստանային նոյնքան բամբակասերմից, որից այժմ ստանում են, այդ պիսով երկրի բամբակի արդիւնաբերութիւնը կը բազմապատկվէր, որով և բնակիչները նիւթապէս կը հարստանային եւ զանազան նորանոր ձեռնարկութիւններին ձեռնամուխ կը լինէին։ Այդ գիւղում մեզ պատահեց խօսիլ մի երիտասարդի հետ, որը քաջ ըմբռնած լինելով, որ իր հայրենիքի թէ նիւթական և թէ բարոյական վիճակի բարւոքումը կախված է եւրոպական արհեստների իր հայրենիքում տարածելուց, մտադիր է գնալ Ամերիկա և ուսումնասիրել բամբակի մշակութեան, մաքրելու և մանելու ու գործելու արհեստները և ապա վերադառնալ և սովորեցնել իր հայրենակիցներին։ Թ.

ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

— Բեամիլ Փաշա Լոնտոնի «Տէյլի Նիւզ»ին գրած է յայտարարելու համար թէ ինքն երբէք առաջարկած չէ Նախարարաց Ժողովոյն ճանաչել զօրինաւորութիւն Իշխան Ֆէրտինանի իշխանութեան, և ոչ ալ ս և է մէկուն թուղթ ներկայացուցած է իբր հաստատող թէ Կ. Պոլսոյ բրիտանական դեսպանն խոստացած լինի Թուրքիոյ պաշտպանել իւր ծովեզերքն Ռուսիոյ հետ պատերազմի բռնուելու դէպքին մէջ։ Այս բոլոր զրոյցք, կ'ասէ, հըրնարուած են, ինչպէս նաև այն զրոյցն թէ ինքն աքսորուած է։ Երբէք Կ. Պոլիսն թողած չեմ, կ'ըսէ, անդ լաւառողջութիւն կը վայելեմ, և Նորին կայսերական վեհափառութիւն, իմ Օգոստափառ Վեհապետն որոյ հրամաններն գործադրելու միշտ պատրաստ եմ, կը բարեհաճի դեռ ցոյց տալ ինձ մեծ բարութիւն և նկատողութիւն։

— Ցոյն յեղափոխական մի, Լափան, մատնութեան ոճիրով ի մահ դատապարտեալ թուրք դատարանաց կողմանէ, ազատեցուցած է Արժերոքասթրոյի յոյն հիւպատոսին քով։ Զդատապարտեալն կառավարութեան յանձնելու մերժած լինելով հիւպատոսը, հրաման տրուած է հիւպատոսարանն պաշարելու։

— Նազար Աղայ, Պարսկական դեսպան ի Փարիզ, «թան»ի մէջ կը հրատարակէ հետևեալ նամակն։— «Կ'ազդեմ զձեզ որ բարեհաճիք ուղղել թանի 21 Ցունվար թուոյն մէջ երևցած յօդուածն նկատմամբ Պարսկաստանի։ Կը յայտարարեմ իբրև ներայացուցիչն Ֆրանսայի բարեկամ եղող երկրի մի, թէ այն լուրն, ինչպէս այն ամեն լուրեր որք Թիֆլիսի ճամբով կուգան, անվաւեր են, և թէ հետևապէս իմ պարտքս է զայնս ժխտել։ Կը կրկնեմ թէ այս բոլոր լուրեր սխալ են, և եթէ անոնք թղթակցի մի կողմանէ իսկ յղուած լինէին, չեմ վախեր ըսելու թէ խաբուած է չարամիտ և կասկածելի անձանձ կողմանէ։..

— Պեռլինցի սեղանաւոր մի, Փօլ Ֆրայտման, 25 Հրէայ ընտանեօք հասած է Արարիա, ուր հող գնելով կը հաստատէ հրէական գաղթականութիւնն։ Հրէաներն բաւական պարէն ունին մի քանի շաբաթ ապրելու համար և չորս թենթանօթ և ռազմամթերք իրենք զիրենք պաշտպանելու համար Պէտէվիներուն դէմ, եթէ հարկ լինի։

— ՍՈՒԼԹԱՆԻ ՀՐՈՎԱՐՏԱԿՆ որով հաստատուած է նոր Խտիվն ի դահ Եգիպտոսի, կ'ընթանայ սապէս։—

«Պահեսցէ՛ Ամենակարողն զՆորին Կայսերական Վեհափառութիւն Սուլթանն, զմեր օգոստափառ տէր, յար ի դահ իւրոց փառապանծ նախնեաց։

«Երկու հեռագիրք, մին Եգիպտական նախարարաց Ժողովոյ Վսեմ. Նախագահէն և միւսն Վսեմ. Մարէշալ Ղազի Ահմէտ-Մուխթար Փաշայէն ուղղեալ, կը ծանուցանեն թէ Ն. Բ. Թէվֆիզ Փաշա, Խտիվ Եգիպտոսի, որ թոքատապէ բռնցուած էր, յետ սակաւօրեայ տառապանաց վախճանած է յերեսաց տաժանակիր ախտին, ժամ 2-ին, անցեալ հինգշաբթի գիշեր ուրբաթ ըլլս։

«Ընկալցի՛ Աստուած զհոգի նորա։

«Ողբացեալ Խտիվն, յօրէ իւր անուանման ի խըտիվութեան Եգիպտոսի, նշանակելի հանդիսացեալ էր իւր անսահման անձնուիրութեամբ առ կայսերական գահն Խալիֆայական, և ի հեճուկս մեծամեծ դժուարութեանց կացութեանն, յաջողեր էր լաւ մատակարարել զերկիրն։ Ուստի և նորա կորուստ խորապէս զգածեցուցած է զՆ. Կ. Վ. Սուլթանն և մեծ վիշտ պատճառած է ամենուն։

«Որպէս ծանուցուած է Պաշտօնական Կազէթում՝ Ն. Կ. Վ. Սուլթանն իւր անսպառ բարութեամբ բարեհաճեր է Եգիպտոսի խտիվութեան կոչել, որոյ գահ թափուր մնացած էր մահուամբ նախորդին, զՆ. Բ. Ապպաս Հիլմի փաշան, անդրանիկ որդին վախճանեալ Խըտիվին, և այս՝ ըստ տրամադրութեանց կայսերական հրովարտակաց չնոհելոց յանցելումն ի կողմանէ վեհապետական իշխանութիւն վարող Խալիֆին։»

— Ցոյն Կառավարութիւնն որոշած է թէ այսուհետև Ցունաստան եկողօտարականք պարտին կրել անցագիր վաւերացեալ յոյն հիւպատոսարանէ մի։ Առ այս Տիար Տէլիեօրկիս, արտաքին գործոց նախարար, հրաւիրած է օտար տէրութեանց ներկայացուցիչներն յԱթէնս ծանուցանել նաւային ընկերութեանց որ այսուհետև իրենց նաւերու մէջ չընդունին այնպիսի անցագրէ զուրկ ճամբորդներն։

Օտար ներկայացուցիչք պատասխանած են թէ նաւարկութեան ընկերութիւնք սոսկական ընկերութիւններ լինելով՝ չեն կրնար նոցա հրահանգ տալ այդ մասին։

— ԶՐՈՑՑԲ ՑԵՂԱՓՈԽՈՒԹԵԱՆ Ի ՍԵՐՊԻԱ. Լոնտոնի Քրոնիքլին լուր եկած է որոյ համեմատ Սերպիոյ մէջ յեղափոխութիւն մի ծագած լինիլ կը զրուցուի ի Վիէննա։ Սերպիայէն եկող ամենայն հեռագրեր գրաքննութեան կ'ենթարկուին։ Վիէննայի սերպիական ներկայացուցիչն կ'ըսէ թէ ճշմարտութիւն չկայ այս զրուցոց մէջ։

ԱԶԳԱՅԻՆ, ՏԵՂԱԿԱՆ ԵՒ ՀԱՆՐԱՀԱՆ

ԼՈՒՐԵՐ

— «ԱՐՁԱԳԱՆԲ»ի միջոցաւ կը տեղեկանամք Կարինէն «Կավկազ» լրագրին ուղղեալ թղթակցութեան մի, յորմէ կը տեսնուի թէ Կարինի դէպքէն յետոյ թրքերն ազգու միջոցներ ձեռք առած են Հայկական խլրտմանց նախատեսութեամբ. բաւական թուով Հայեր Կարինէն քշուեր են, և կոտկածելի Եւրոպացիներ Կարինէն և Թուրքիոյ սահմաններէն։ Ժամանակ վերջ նորէն երեւցած են Եւրոպացիք և սկսած են գործել, եւրոպական յանձնախմբերէ եկած յայտարարութիւններ ցրուել և ժողովներ կազմել։ Այսպիսի դարձուածոց կրկնութիւնն արգիլելու համար ներկայումս Տրապիզոնում և Ռուսաց սահմանի վերայ մեծ խստութեամբ կը քննեն անցագրերն։ Ռուսաց սահմանագլխի հսկողութիւնն ցարդ կը կատարուէր տաճկական հաւակ զինուորաց ձեռօք, իսկ այժմ բաւական թուով հեծելազօրք կանգնած են, որպէս զի անհանդարտ անձնաւորութեանց արշաւանքէն աղատ պահեն թուրք վիլայէթները։

—«ՀՆՉԱԿ»ի կը գրեն թէ Շէխեաղուլ գիւղէն տէրտէրի աղջիկն առեւանգուեցաւ Կողակ գեղացի զինուորէ մը, բայց բարեբաղդաբար գտնուեցաւ Կողակ գիւղին մէջ կտրիճ Հայ մը որ յարձակելով զինուորի տան վրայ աղջիկը առաւ և տանելով իր գեղը՝ պատկեց իր՝ այսինքն աղջկան՝ նշանածին հետ։

—«ԱՐՁԱԳԱՆԲ»ի մէջ կը կարդամք վճակագրութիւն մի յորմէ կը տեսնուի ինչ որ բիւր անգամ ցուցուած է թէ Հայերն իրենց հին պատմական եկեղեցիէն բաժնուելու տրամադիր չեն։— Ահա վիճակագրութիւնը։ «Ռուսաց սինոդի աւագ պրոկուրորի հրատարակած հաշուից երեւում է որ 1883 թուին յոյն — ռուսական դաւանութիւնն ընդունել են 393 Հայ, 1884ին՝ 48, 1885ին՝ 222, 1886ին՝ 21, 1887ին՝ 23, 1888ին՝ 7, ընդ ամենը վեց տարուայ ընթացքում 710 Հայ։ Նոյն 6 տարուայ ժամանակամիջոցում այդ կրօնն սկսել են դաւանել 20 հազար 217 լուտերական, 6 հազար 738 կաթոլիք, 5 հազար 226 մահմեդական և 3 հազար 722 Հրէայ։»

— ԱԹԷՆՔԷՆ կը գրեն մեզ թէ թուրք կառավարութիւնն շատ ջանացած է համոզել յոյն իշխանութիւններն արտաքսել ԱԹԷՆՔԷՆ մի քանի հայ հայրենասէրներն, բայց չէ յաջողած։

— ՀԱՅԿԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ Յունվար 30-ի նստին հրաւիրեալ էր Ամերիկացի Մր. Ուիլ՛ըմ Զէմպըրս, որ տասն տարի Հայաստանում միսիոնար եղած էր։ Պատ. Զէմպըրս խօսեցաւ համակիր և համակրելի եղանակաւ, և ըսաւ թէ ինքն Հայոց անցելոյն Պատմութիւնն և այժմու ժողովուրդն ուսումնասիրելով համոզուած է թէ հայ ցեղն կարևոր դեր մ'ունի կատարել յԱրեւելս։ Յորդորեց որ Ամերիկայում գտնուող պանդուխտ Հայն հոգ տանի ի վեր քան զամենայն մշակել իւր բնաւորութիւն, աղնուացուցանել ներքին մարդն։ Այս գերագոյն նպատակն ինկատի ունենալով պէտք է ընել արհեստի ընտրութիւն, ապրուստի պարկեշտ միջոց և այլոց ծառայելու յարմար գործ ունենալ։ Օգտակար արհեստի չնորհիւ պիտի կրնայ պանդուխտ Հայն իր արժանապատուութիւն պահպանել և իւր հայրենակցաց օգտակար հանդիսանալ։ Պատ. Զէմպըրս խօսեցաւ իբր 25 վայրկեան, և մաքուր հայերէնով բացատրեց անձնական սրբութեան, օգտակար արհեստի և անձնուէր լինելու կարևորութիւնը, և այս երեքին իրարու հետ ունենալիք սերտ կապակցութիւնն։

Տր. Այվազեան ներկայից չնորհակալու զգացմանց ազդու թարգման եղաւ մի քանի պատշաճ բանիւք, ըսքանչանքն յայտնեց օտարականի մի այնքան լաւ հայերէն խօսելու վարժութեան, և Հայոց մասին այնպիսի քաջալերական համակրանք տածելուն նկատմամբ, և առաջարկեց չնորհակալեաց քուէ տալ Պատ. հիւրին։ Տիար ատենապետն ևս պատշաճ բանիւք այս առաջարկն քուէի դրաւ և ներկայք յոտնկայս ընկալան առաջարկն։

Ընթացիկ և պատահական խնդրովք օրակարգն ծանրաբեռնեալ լինելով՝ արհեստներու վերայ լինելիք ատենախօսութիւններն յետաձգուեցան Փետր. 13ի նստին։

— 1865ին ինիւ Եորք 30 մարդուն մէկն կը մեռնէր ամեն տարի, այժմ 40ին մէկն կը մեռնի. 10 տարի աւելի է ուրեմն կենաց միջին տևողութիւնն չնորհիւ լաւագոյն առողջապահութեան։

— Որքան աւելի մեծ է քաղաք մի այնքան աւելի շատ է մարդ գլուխ եղած ծախքն հանրային նպատակաց համար— փողոցաց մաքրութեան, լուսաւորութեան ևն.։ Այն քաղաքաց մէջ ուր նուազ քան 50 հազար բնակիչ կայ, մարդ գլուխ ծախքն է տարին 9 թալէռ 64 սէնթ, առաւել քան 200 հազար բնակչօք քաղաքի համար՝ 15 թալէռ 98 սէնթ։ Նիւ-Եորք և Պոսթըն են առաջին այս նկատմամբ, զի ծախքն է 23 թալէռ առ մէն մի բնակիչ կամ 115թ. առ մէն մի ընտանիք։ Ասոնցմէ դուրս են դպրոցի, գթութեան հաստատութեանց, հանրային եւ ջրային շինութեանց ծախքերն։ Լոնտրայի մէջ առ մէն մի ընտանիք 60 թալէռ կ'ինայ ծախքն. Մանչէսթըր աւելի կը ծախսէ, ուր 80թ. կ'ինայ իւրաքանչիւր ընտանիքի։ Իսկ Փարիզի մէջ, ուր փողոցաց մաքրութիւնն և լուսաւորութիւնն գերազանց է քան ո և է ուրիշ մայրաքաղաքի առ մէն մի ընտանիք 130 թալէռի կու գայ հաշիւն։

Ամերիկայի մէջ այս ծախքեր կը հոգացուին տրօք ի վերայ ստացուածոց, ամեն ոք կուտայ ոչ ըստ շահուն զոր կ.ընէ տարուէ տարի այլ ըստ հաստա-տուն կալուածոյն զոր ունի։ Քաղաքայի տրոց մասնակցող Հայերն Ամերիկայումն կրնան համրուիլ մատի վերայ, վասնզի նոյն իսկ այն մի քանի հայ վաճառականք որք նշանակելի գումար կը շահին ամեն տարի, ոչ ինչ տուրք կը վճարեն՝ չունենալով այնպիսի կալուած յորմէ վարձք ընդունին կամ զոր շահագործեն։

— Փետր. 6-ի գիշերն Նիւ-Եոնք Հոթէլ Ռոյըլ կոչուած հիւրանոցում հրդեհ ծագելով՝ բովանդակ շէնքն երկու ժամու մէջ յահիւն դարձաւ։ Կեանքի մեծաթիւ կուրուստ եղած է, դեռ կիսայրեաց դիակներ կը հանուին փլատակաց տակէն։ Հին էր շէնքն և այժմու ճարտարապետութեան առողջարանական պահանջմանց դէլ-խովին անհամակերպ։ Հանրային շինուածոց վերատեսուչն կարող էր քանդած լինել զայն երկրին օրինաց զօրութեամբ, բայց անհոգ գտնուած էր։ Երկրի մի օրէնքներն որքան և լաւ լինին՝ անօգուտ են եթէ զայնք ի գործ դնող հաւատարիմ պաշտօնեաներ չլինին։ Մի քանի ամիս առաջ ալ Փարք-Փլէյս կոչուած չուկայում հին գոնծանոց մի փլաւ մեքենայից ահագին ծանրութեան տակ, և շատ կեանքեր կորեան, աղէտ զոր Հանրային Շինուածոց տեսչութիւնն կրկար արդիլած լինիլ։

ԵՐԿԱՑՆԱԿԵՑՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՐՀԵՍՏ։ Նոր վիճակագրութենէ մի յայտնի կ'երևի թէ արհեստն որքան ազդեցութիւն ունի առողջութեան եւ կենաց տեւողութեան վերայ։ Թան զամենայն աւելի երկայնակեաց մարդիկն եկեղեցականք են, ուստի և եկեղեցական դասն իբրև չափ առնելով հաշուած և գտած է վիճակագիրն հետեւեալ թուանշաններն։—

Մինչեւ որ 1000 եկեղեցականի մէջէն 100ն մեռնին,

1000 պարտէզպանէ	108 կը մեռնին,
Ագարակապան	114
Հողագործ	126
Թղթագործ	129
Համեմավաճառ	139
Ձկնորս	143
Իրաւաբան	152
Մեքենագործ	155
Վաճառական	159
Հանքահան	160
Կօշկակար	166
Շրջիկ յանձնակատար	171
Հացագործ	171
Որմնադիր	274
Երկաթագործ	175
Դերձակ	189
Տպագրիչ	193
Բժիշկ	202
Կազմարար	210
Մսագործ	211
Կապարագործ և Ներկիչ	216
Կառապան	267
Գինեպան	274

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ՁԱՅՆ ՄԻ ԱՐԱՐԱՏ ԼԵՌՆԷՆ, անգղիերէն տետր մ'է 54 երեսներէ բաղկացեալ, որ կը պարունակէ հեղինակին - Տիար Միհրան Պաղտասարեանի - կենսագրութիւնն, Օսմանեան Պատմութեան վերայ ակնարկ մի և Հայոց Պատմութեան բովանդակութիւն մի։ Տետրին վերջին երեսներն նուիրեալ են Հայոց պէտքերն և բաղձանքն ցուցնելու։

Այս տետր կը վաճառուի 50 սէնթի. դիմել հեղինակին հետեւեալ հասցէիս — Mr. M. Baghdasarian, 411 Walnut St. Des Moines Iowa, U. S. A.

ԷԼԵՏԻՍ ՆԱՀԻԿԵԱՆ

Պատիւ ունի ծանուցանել թէ երկար տարիներու փորձառութեան շնորհիւ ամենեն ապահով և ժամանակներով փոխանակագիր տալ կարող է Խարբերդու և Պոլսոյ վրայ, և փարա կամ թիքէթ իրկել Մարսիլիա։

Ունի նաև ընծայի շատ յարմար Տաճկական Չինական, Հնդկական և Ճապոնական ամեն տեսակ ապրանքներ։

Ծանօթութիւն.— Գործերնուս խաթրին համար ստիպուած չեմք մեր անունը կորսնցնել և օտար անուն մը կրել, մենք բուն Նահիկեան ենք։ Մեզ գրել հետեւեալ հասցէին

A. N. Nahikian, 39 Pleasant St. Worcester, Mass.

Հայե՛ր

Երբ նոր գլխարկի, օձիքի կամ ոևէ արական հանդերձեղենի պէտք ունենաք, գնացէք New York Hat House, 14 Front Street, Worcester, որ Մէյն փողոցին մօտիկ է, հոն պիտի գտնէք լաւ ապրանքներ միայն, և շատ ժամանակ։

ՄՇԱԿ

Գրականական և քաղաքական լրագիր, կը հրատարակուի շաբաթն երեք անգամ։ Տարեկան բաժնեգինը է 10 ռուբլի։ Հասցէն

Redaction du Journal «Mschak» Tiflis, RUSSIE

ԱՐՁԱԳԱՆՔ

Գրականական և քաղաքական լրագիր, կը հրատարակուի շաբաթն երեք անգամ նոյնպէս ի Թիֆլիս։ Տարեկան բաժնեգինն է 10 ռուբլի։

ԱՂԲԻՒՐ ամսագիրն և ՏԱՐԱԶ շաբաթաթերթնկը հրատարակուին նոյն ուղղութեամբ և ծրագրով, երկուքն ալ պատկերազարդ և կրթական հրատարակութիւններ են։ «Աղբիւր»ի տարեկան բաժնեգինն է 4 ռուբլի, Տարազինն՝ 7։ Կը հրատարակուին ի Թիֆլիս։

Ով որ երկու թերթերուն եւս բաժանորդ լինի, կ'ընդունի մէկ տարուան մէջ 51 պատկեր իբր պրէմիա։

ՆՈՐ ԴԱՐ

Քաղաքական—գրականական ամենօրեայ թերթ, կը հրատարակուի Թիֆլիսում։ Տարեկանն է 10 ռուբլի։ Ամերիկայի և այլ հեռաւոր երկիրների բաժանորդները վճարում են տարեկան 40 ֆրանք։

— «ՀԱՅԲ»ի 1891 տարին ամբողջ կապուած կը ծախուի 2 թալէր 5 սէնթի։

WORCESTER FIVE CENTS SAVINGS BANK
No. 246 Main St. Worcester, Mass.

Այս պանքան մինչև հինգ սէնթի փոքր դումար կ'ընդունի։ Յունվար, Ապրիլ, Յուլիս և Հոկտ. ամսոց առաջին օրէն կը հաշուի դրամի շահն 800ին 4։ Պանքային ժամերն են 9էն 1, և 2էն 4։ Շաբաթ օրերն՝ 9էն 1։

E. B. STODDARD, President.
J. STEWART BROWN, Freasurer.

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ԱՐՈՒԵՍՏ

ԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԵԱՆ

21 ԴԱՍ 16 ՊԱՏԿԵՐՕՎ

ԵՒ

ՅԱՒԵԼՈՒԱԾՈՎ

ԱԶԳԱՅԻՆ ՈՒ ՕՏԱՐ ՀԱՏԸՆՏԻՐ ԸՆԹԵՐՑՈՒԱԾՈՑ ԵՐԿԱՍԻՐՈՒԹԻՒՆ

Մ. Ս. ԳԱԲԲԻԷԼԵԱՆ

Գին մէկ թալէռ կամ հինգ ֆրանգ. Ճանապարհի ծախքն հրատարակչին վերայ է. բայց յանձնարարութիւնք չեն կատարուիր եթէ գինն կանխիկ չվճարուի։

Տաճկաստան ղրկուելու օրինակներէն յատկապէս վերցուած է Ազգային Ընթերցուածոց յաւելուածն, եւ եթէ Տաճկաստանի վարժարանաց հոգաբարձութիւններէն խնդրուի, գնէն 100ին 50 զեղչ կը լինի.

LANDMAN & SONS,

ՎԱՃԱՌԱԿԱՆ

ՄԱՐԴՈՑ ԵՒ ՏՂՈՑ ՀԱԳԵՍՏՈՒՑ

ՎԱՏԱՀԵԼԻՔ ԱՊՐԱՆՔՔ ԵՒ ՀԱՄԱՓԱՌՔ ԳԻՆ.

ԵՐԲՈՐԴ ԷՎԻՆԻՈՒ, ԱՆԿԻՒՆ 26 Դ ՓՈՂՈՑԻՆ

O. F. HARRIS

ԱՏԵՄՊԵՆԵՔՈՑԾ

476 Main St. Worcester, Mass.

ՎԱՐՊԵՏ ԵՒ ՓՈՐՁԱՌՈՒ ԲԺԻՇԿ Է ԱԿՌԱՆԵՐՈՒ

PHARMACIE FRANCAISE,

NORBERT FRANCK.

311 7th AVENUE, NEW YORK.

Դեղագիրք կը պատրաստուին խնամով

BUSH & CO

ՊՈՒՇ ԵՒ ԸՆԿ.

ԴԵՂԱԳԻՐՔ

(հաստատեալ ի 1849)

56 FRONT STREET WORCESTER, MASS.

Դեղագիրք խնամով կը պատրաստուին և չափաւոր գնով

LANTELME'S

HOTEL & RESTAURANT,

40 UNION SQUARE NEW YORK CITY

16 և 17 ՐԴ փողոցներու միջև արևելեան կողմն։

—Ընտիր Գաղղիական Խոհարարութիւն—

Նախաճաշ 40 և ճաշ 75 սէնթ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ
Մ. Ս. ԳԱԲՐԻԷԼԵԱՆ